Նորայր Սարուխանյան, պ.գ.դ.

01. 06. 1935 թ.

Կրթություն

1953 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը:

1963 թ. հոկտեմբերի 1-ին ընդունվել է ԳԱԱ պատմության ինստիտուտի ասպիրանտուրան:

1968 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման պրոբլեմը մինչհեղափոխական հայ պատմագրության մեջ» թեմայով:

1998 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Հայկական հարցը մինչխորհրդային հայ հասարակական-քաղաքական մտքի և պատմագրության մեջ» թեմայով :

Աշխատանքային փորձ

1961 թ. սեպտեմբերից մինչև 1963 թ. հոկտեմբերի 1-ը աշխատել է ՀԽՍՀ նախարարների խորհրդին առընթեր Ռադիոհեռուստապետկոմի պրոպագանդայի խմբագրությունում որպես ավագ խմբագիր:

1970 թ. աշխատել է ԳԱԱ պատմության ինստիտուտում, սկզբում՝ կրտսեր, այնուհետև՝ ավագ գիտաշխատող:

1970-1984 թթ. աշխատել է «Խորհրդային Հայաստան» օրաթերթի խմբագրի առաջին տեղակալ:

1986-1991 թթ. վարել է «Հայգիրք» հանրապետական վարչության տնօրենի պաշտոնը: 1991-1993 թթ. աշխատել է ՀՀ ԳԱԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի գիտական քարտուղար: Մինչև օրս աշխատում է պատմության ինստիտուտում որպես առաջատար գիտաշխատող:

Հրատարակված աշխատություններ

1. «Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման պրոբլեմը մինչհեղափոխական հայ պատմագրության մեջ», Եր., ՀՍՍՌ ԳԱ, 1971:
2. «Ստեփան Շահումյանի պատմագիտական հայացքները», Եր., «Հայաստան» հրատ., 1979:
3. «Հայկական հարցը մինչխորհրդային հայ հասարակական-քաղաքական մտքի և պատմագրության մեջ», Եր., «Ոսկան Երևանցի» տպագրատուն, 1997:
4. «Լեոն և Հայկական հարցը», Եր., «Ոսկան Երևանցի» տպագրատուն, 1998, «Սիոնիզմի իսկական դեմքը», Եր., «Հայաստան» հրատ., 1984:
5. «Ալեքսեյ Ջիվելեգովը որպես պատմաբան և Հայկական հարցը», Եր., Մեսրոպ արք. Աշճեան մատենաշար 42, 2008:
6. «Մտորումներ և հուշեր ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի մասին» (ծննդյան 125-ամյակի առթիվ) Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012:
7. «Հայ պատմագրությունը XIX դարում և XX դարասկզբին», Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013:
8. «Ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի պատմագիտական ժառանգությունը», Եր., ՀՀ ԳԱԱ պատ. ինստ., 2015:

Գիտական հետաքրքրությունների շրջանակ

Հայոց պատմության 19-20-րդ դդ. պատմագիտությունն ու պատմահրապարակախոսությունը:

Լեզուների իմացություն

Անգլերեն, ռուսերեն